

Հայաստանի Հանրապետության
տարածքում գործող բանկերին,
վարկային կազմակերպություններին,
ապահովագրական ընկերություններին,
ապահովագրական բրոքերներին,
ներդրումային ընկերություններին,
ներդրումային ֆոնդի կառավարիչներին,
գրավատներին,
արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպություններին,
վճարահաշվարկային կազմակերպություններին,
«ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին,
«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին,
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին

Հարգելի՛ գործընկերներ,

25.06.2019թ. ընդունվել է ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (Այսուհետ՝ Օրենք): Օրենքի համաձայն 2020թ. հունվարի 1-ից փոփոխվելու են գործունեության որոշակի տեսակներով (այդ թվում՝ ֆինանսական գործունեության տարբեր տեսակներով) զբաղվելու համար սահմանված տարեկան պետական տուրքերի դրույքաչափերը, ինչպես նաև սահմանվել են նոր տուրքեր:

Մասնավորապես,

- 01.01.2020 թվականից հետո գրանցվող կամ լիցենզավորվող ֆինանսական կազմակերպությունները և վերջիններիս մասնաճյուղերը գործունեություն իրականացնելու համար պետք վճարեն տարեկան պետական տուրք՝ նոր դրույքաչափերով:
- Մինչև 01.01.2020 թվականը գրանցված կամ լիցենզավորված և գործող կազմակերպությունների համար տարեկան պետական տուրքերի նոր դրույքաչափերը գործում են յուրաքանչյուր սուբյեկտի գրանցման և/կամ լիցենզավորման ամսաթվին համապատասխան հերթական տարին սկսելու ամսաթվից:
- Ֆինանսական կազմակերպությունների մասնաճյուղերի համար, որոնք նախկինում տուրք չէին վճարում, սահմանվել են տարեկան պետական տուրքեր: Ընդ որում՝ 01.01.2020թ. դրությամբ գործող մասնաճյուղերի համար տարեկան պետական տուրք վճարելու պարտավորությունն առաջանում է յուրաքանչյուր մասնաճյուղի գրանցման ամսաթվին համապատասխան հերթական տարին սկսելու ամսաթվից:

Սույն գրության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ կենտրոնական բանկի Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչության լիցենզավորման ու գրանցման բաժինների աշխատակիցներին՝ 59-29-84, 59-29-85, 59-29-78, 59-29-83, 59-29-87, 59-29-95 հեռախոսահամարներով:

- Վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի համար սահմանվել է տարբերակված մոտեցում, կախված արտարժույթի կանխիկ փոխանակում իրականացնելու հանգամանքից:
- Ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի համար սահմանվել է տուրք՝ անկախ ապահովագրական դասերի քանակից:
- ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորվող կազմակերպությունների համար վերացվել է այլ վայրում ևս միևնույն գործունեություն իրականացնելու դեպքում, տարեկան տուրքի 50%-ը վճարելու հնարավորությունը:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում հիշեցնել, որ տարեկան պետական տուրքերը ժամանակին չվճարելու դեպքում հաշվարկվում է տույժ, որը ենթակա է գանձման օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերը նշվածը, ձեր ուշադրությունն ենք հրավիրում վերը նշված փոփոխություններին, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կատարելու համար:

Լիցենզավորման և կորպորատիվ
ֆինանսների վարչության պետ՝

Էդգար Սարգսյան